



Նախագիծը իրականացվում է ԱԳՆ Լեհաստանի Զարգացման Օժանդակության մրցակցության շրջանակներում

Ծրագրի անվանումը՝ <<Արտադրողների խմբերը և արդյունավետ գյուղատնտեսական խորհրդատվությունը որպես Շիրակի մարզի զարգացման հնարավորություն >>:

Ծրագիրը՝ ԼՀ Արտաքին Գործերի Նախարարության
Մրցույթ՝ <<Զարգացման լեհական օժանդակություն -2013թ. >>:


Բյուջե՝ 145 265 PLN (լեհական զլոտի), ԼՀ ԱԳՆ
Դրամաշնորհ – 116 905 PLN (լեհական զլոտի):

Նախագիծ կազմողը՝ Միջազգային Համգործակցության Գրասենյակ,
Վելիկոպոլսկայի վոևոդայության Մարշալային
կառավարման մարմնի գյուղատնտեսության և
գյուղական տարածքների զարգացման
դեպարտամենտի հետ:

Գործընկերներ՝ Վելիկոպոլսկայի Գյուղտնտեսական
Խորհրդատվական կենտրոն:

Շահառու՝ Շիրակի մարզպետարան (Հայաստանի
Հանրապետություն):

Համակարգող՝ Դոմինիկա Կլավե-Օխոդ



Նախագիծը համաֆինանսավորված է ԼՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից <<Զարգացման լեհական օժանդակություն-2013թ.>> ծրագրի շրջանակներում :



Գործողություն 1 Վելիկոպոլսկայի վոևոդության պատվիրակության այցը Հայաստան

**Ժամկետը՝ 17-20 հունիսի 2013թ.
Վայրը՝ Գյումրի (Շիրակ, Հայաստան)**

Պատվիրակության կազմը՝

1. Պարոն Մարեկ Բեեր՝ Վելիկոպոլսկայի վոևոդության Մարշալային կառավարման մարմնի գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման դեպարտամենտի տնօրեն :
2. Պարոն Ռիշարդ Յավորսկի՝ Պոզնանում Վելիկոպոլսկայի վոևոդության Գյուղատնտեսական Խորհրդատվական կենտրոնի տնօրեն :
3. Պարոն Կշիշտոֆ Խենչկե՝ <<Chenczke>> բանջարաբուծական տնտեսություն, բանջարեղեն արտադրողների խումբ <<Chenczke & Janas>> ՍՊԸ:
4. Տիկին Դոմինիկա Կլավե-Օխոդ՝ նախագծի համակարգող, Վելիկոպոլսկա յի վոևոդության Մարշալային կառավարման մարմնի միջազգային համգործակցության գրասենյակ :
5. Ալեքսանդր Ղազարյան՝ ռուսերեն լեզվի թարգմանիչ:





Այցելության նպատակները՝

1. Ծանոթանալ մարզի գյուղատնտեսության առանձնահատկություններին:
2. Ծանոթանալ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կառուցվածքին և գործունեության շրջանակներին, գյուղատնտեսության բնագավառում առկա հիմնախնդիրներին և կարիքներին, որոնք համագործակցության շրջանակներում կարող են լուծվել:
3. Ծանոթանալ Շիրակի մարզի տարածաշրջանի գյուղական տարածքների զարգացման ռազմավարության ը և առկա ծրագրերին:



4. Վեիկոպոլսկայի վոևոդայի Գյուղդեպարտամենտի գործունեության և գյուղական տարածքների աջակցության ոլորտում իրականացվող ծրագրերի ներկայացում :
5. Հանդիպում Շիրակի մարզի որևէ տեղական ինքնակառավարման մարմնի հետ:
6. Ծանոթանալ գյուղատնտեսության բնագավառում պետական օժանդակության ձևերին և պարզել, թե հասանելի են արդյոք դրանք հայ գյուղացիներին:
7. Ծանոթանալ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գործող այլ կազմակերպչական ծառայությունների գործունեության հետ (պետական գործակալություններ, խորհրդատվական և տեսչական հիմնարկներ և այլն):



Նախագիծը համաֆինանսավորված է ԼՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից <<Զարգացման լեհական օժանդակություն-2013թ.>> ծրագրի շրջանակներում :



Գործողություն 2 Շիրակի մարզի ներկայացուցիչների վերապատրաստում

Ժամկետը՝ 8-25 սեպտեմբերի 2013թ.
Վայրը՝ Պոզնան, տարածքը՝ Վելիկոպոլսկայի վոևոդություն

Հայկական կողմի մասնակիցները՝

1. Հարություն Արշակյան - գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման հարցերով Շիրակի մարզպետի տեղակալ:
2. Համլետ Գասպարյան - հայկական կողմի համակարգող, Շիրակի մարզպետարանի բնապահպանության բաժնի պետ
3. Զիվան Ասլանյան - Շիրակի մարզի Գյուղատնտեսության Աջակցության Մարզային կենտրոնի տնօրեն:
4. Հունան Պետրոսյան - Մեղրաշենի գյուղապետ, հացահատիկի և կարտոֆիլի արտադրող:
5. Մամիկոն Ղազարյան - ագարակատեր, <<Վ և Մ Ագրոսերվիս >> ՍՊԸ տնօրեն, կարտոֆիլի արտադրող
6. Գևորգ Գևորգյան - ագարակատեր, <<Հացիկի Ագրոբարիք>> ՍՊԸ տնօրեն, հացահատիկի և կարտոֆիլի արտադրող:





Գործողության նպատակները 2՝

Ժամկետը՝ 9-13 սեպտեմբերի 2013թ.

Վելիկոպոլսկայի վոևոդայի Մարշալային կառավարման մարմնի գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման դեպարտամենտ

Ուսուցման հիմնական շրջանակները՝

Վելիկոպոլսկայի վարչության Մարշալային կառավարման մարմնի գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման դեպարտամենտի խնդիրները և իրավասությունները:

Արտադրող խմբերը տեսականում և գործնականում:

Գյուղտնտեսությունից դուրս եկամուտ ստանալու հնարավորության ստեղծում (տարածաշրջանային ապրանքների խթանում, գյուղական տուրիզմ), POLAGRA FOOD ցուցահանդես վաճառքի ժամանակ տարածաշրջանային մթերքների արտադրության խթանման հետ կապված առաջադրանքների նախապատրաստում և իրագործում:



Նախագիծը համաֆինանսավորված է ԼՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից <<Զարգացման լեհական օժանդակություն-2013թ.>> ծրագրի շրջանակներում :



Գործողության նպատակները 2`

Ժամկետը` 14-20 սեպտեմբերի 2013թ.
Պոզնանում Վելիկոպոլսկայի Գյուղտնտեսական
Խորհրդատվական Կենտրոն



Ուսուցման հիմնական շրջանակները`
Վելիկոպոլսկայի Գյուղտնտեսական Խորհրդատվական
Կենտրոնի գործունեությունը (ՎԳԽԿ)
Պոզնանում Վելիկոպոլսկայի Գյուղտնտեսական
Խորհրդատվական Կենտրոնը պատրաստել է մեկ շաբաթյա
վերապատրաստում Վելիկոպոլսկայում գտնվող հայկական
պատվիրակության անդամների համար, որի շրջանակներում
մասնակիցները ծանոթացել են գյուղտնտեսական
խորհրդատվական համակարգի ոլորտում իրականացվող
մանրամասն առաջադրանքներին:



ՎԳԽԿ վերապատրաստման ընթացքում կազմակերպել է նաև ուսումնական այցելություններ Վելիկոպոլսկայի վոևոդիայի տարածքի ցուցադրական տնտեսություններում, որոնք համապատասխանել են Շիրակի մարզի տարածքի գյուղտնտեսական ապրանքների պրոֆիլին:



Նախագիծը համաֆինանսավորված է ԼՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից <<Զարգացման լեհական օժանդակություն-2013թ.>> ծրագրի շրջանակներում :



Գործողության նպատակները 2`



Smaki Regionów

Ժամկետը` 21-24 սեպտեմբերի 2013թ.

Վայրը` Պոզնանի միջազգային ցուցահանդես

Մասնակցությունը` <<POLAGRA FOOD 2013>> տոնավաճառին
և <<Տարածաշրջանային համերը>> ցուցահանդեսին



<<Տարածաշրջանային համերը>> ցուցահանդեսի ժամանակ նախագծի մասնակիցները Շիրակի մարզին հատկացված տաղավարում ներկայացրել են տեղական արտադրության մթերքները:

Նախագծի մասնակիցները ծանոթացել են գյուղմթերքների արտադրության խթանմանն ուղղված գործունեությունների նոր միտումների և սննդի վերամշակման համակարգի բարելավմանն ուղղված լուծումների հետ: Ի շնորհիվ միջոցառման մասնակցության պատվիրակության անդամները հնարավորություն են ունեցել ուղղակի կապ հաստատել սննդի վերամշակման ոլորտում արտադրողների, ներկրողների, ինչպես նաև ներդրողների հետ:





Գործողություն 3

Գործնական ուղեցույցի հրատարակում

Ժամկետը՝ 2013թ. հոկտեմբեր

Ամրապնդել Շիրակի մարզում արտադրող խմբերի ստեղծման գործընթացը, Վելիկոպոլսկայի վոևոդությունում վերապատրաստման և ուսուցման ընթացքում ձեռք բերած փորձի հիման վրա:
<<Արտադրողների խմբեր, քայլ առ քայլ – լավագույն փորձի օրենսգիրք>>:
Ռուսերեն լեզվով տպագրված հրատարակությունը հասանելի կլինի նաև Շիրակի մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների կայքէջերում:





Գործողություն 4 Նախագիծն ամփոփող կոնֆերանս

Ժամկետը՝ 2013թ. նոյեմբեր
Վայրը՝ Գյումրի, Շիրակ



Գործողության նպատակները 2՝

Նախագծում պլանավորված գործողությունների իրականացում:

Արտադրող խմբերի ստեղծման և դրանց գործունեության առավելությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

Գյուղատնտեսական խորհրդատվական արդյունավետ համակարգի գաղափարների տարածումը:

Կոնֆերանսին մասնակցել են տարածքային կառավարման մարմնի, գյուղական համայնքների, գյուղատնտեսական խորհրդատվական կենտրոնի ներկայացուցիչներ, ֆերմերային տնտեսություններ, ինչպես նաև փորձագետներ, որոնք զբաղվում են գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրներով, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրողների համագործակցության գաղափարին սատարող անձինք:





polska pomoc

Նախագիծը համաֆինանսավորված է ԼՀ Արտաքին Գործերի
Նախարարության կողմից «Ջարգացման լեհական
օժանդակություն-2013թ.» ծրագրի շրջանակներում :